ԻՄ ՔԱՅԼԸ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

+374 60 501 444
info@mystep.foundation
www.mystep.foundation

Ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներների ավարտական կուրսում սովորող կամ արդեն իսկ ավարտած երիտասարդներին

Այսօր մենք թևակոխել ենք քվանտային տեխնոլոգիաների դար, երբ քվանտային մեխանիկան որպես գիտություն ձեռք է բերել շատ կարևոր կիրառական նշանակություն, ինչը մի քանի տասնամյակ առաջ նույնիսկ դժվար էր պատկերացնել:

Հաշվի առնելով արդի միջազգային գիտակրթական զարգացումները՝ «Իմ քայլը» հիմնադրամը իրականացնում է «Quanta» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մեկուկեսամյա մագիստրոսական կրթական ծրագիր, որի արդյունքում շրջանավարտներին շնորհվելու է մագիստրոսի կրթական աստիճան և դիպլոմ: Ուսուցումը լինելու է առկա, վերջինիս շրջանակներում մեծամասամբ դասավանդելու են արտերկրի առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ հայազգի դասախոսներ: Յուրաքանչյուր մագիստրոս ուսման ընթացքում ունենալու է իր գիտական ղեկավարը, որի հետ իրականացնելու է գիտահետազոտական աշխատանք՝ նախապատրաստելով մագիստրոսական ատենախոսությունը, որը հետագայում կտպագրվի գիտական հոդվածի տեսքով:

Նշենք, որ ծրագրին կարող են մասնակցել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում առնվազն բակալավրի որակավորում ունեցող երիտասարդները:

Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում կարող են ուսումնառել ընդամենը 15 ուսանող, որոնց ուսման ամբողջ վարձավճարը փոխհատուցելու է «Իմ քայլը» հիմնադրամը՝ կրթաթոշակի տեսքով: Ծրագրի ընդունելությունը տեղի կունենա օգոստոս ամսին:

Ամառային դպրոց՝

Մագիստրոսական ծրագրի հնարավոր ուսանողներին վեր հանելու, նրանց գիտելիքներով զինելու և սեպտեմբերին մեկնարկելիք ծրագրին նախապատրաստելու նպատակով «Quanta» ծրագրի շրջանակներում հուլիսի 1-10 GreenWood հյուրանոցում անցկացվելու է ամառային դպրոց:

ԻՄ ՔԱՅԼԸ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

+374 60 501 444
info@mystep.foundation
www.mystep.foundation

Ամառային դպրոցի ընթացքում դասավանդումը կազմակերպվելու է հետևյալ թեմաներով՝

- Բարձրագույն մաթեմատիկայի հատուկ հարցեր,
- Քվանտային ֆիզիկայի հիմունքներ,
- Էլեկտրոդինամիկայի հիմունքներ,
- Մաթեմատիկական մոդելավորում:

Մասնակցության պայմաններն են՝

- ✓ Լինել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառների ավարտական կուրսում սովորող ուսանող կամ արդեն իսկ ավարտած լինել բակալավրիատը,
- ✓ Հայտերի ընդունման ժամանակ առավելությունը տրվելու է արդեն իսկ բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտներին,
- ✓ Տեղերը սահմանափակ են՝ մինչև 30 մասնակից,
- ✓ Մասնակցությունն անվճար է:

Գրանցման վերջնաժամկետը՝ հունիսի 28, ժամը 18:00

Գրանցվել՝ https://bit.ly/3HqRVP6

Հավելյալ հարցերի դեպքում՝

էլ. հասցե՝ quantumphysics@mystep.foundation

Հեռ.՝ +374 44 44 01 74